ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Խ-1111[1]-25.06.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 27-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-2.3-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 1-2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապատվության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Կառավարությունը կարող է օգտվել իր նախապատվության իրավունքից նշված ծանուցումը ստանալուց հետո եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապատվության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

2.2. Սույն հոդվածի 2.1-րդ մասում նշված նախապատվության իրավունքի իրականացման դեպքում գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման արժեքը չի կարող գերազանցել դրանց շուկայական արժեքը, որը որոշվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով

սահմանված կարգով տրված գնահատման հաշվետվությամբ: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում դրանցով սահմանված արժեքների միջինը, եթե տարբեր գնահատման հաշվետվություններով սահմանված արժեքների տարբերությունը չի գերազանցում 10 տոկոսը: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների արժեքների տարբերությունը 10 տոկոսից ավելին լինելու դեպքում հիմք է ընդունվում 10 տոկոսի չափով տարբերությունը, և գնահատման արժեքը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

2.3. Օրենսդրությամբ կամ լիցենզավորված անձի կանոնադրությամբ կամ այլ իրավական ակտերով նախատեսված՝ անձի մասնակցի կամ բաժնետիրոջ կողմից բաժնեմասի կամ բաժնետոմսի գնման (ձեռքբերման) նախապատվության իրավունք նախատեսող կարգավորումները արգելք չեն հանդիսանում սույն օրենքով սահմանված՝ Կառավարության ձեռքբերման նախապատվության իրավունքի առաջնահերթ իրացման համար:».

2) 3-րդ մասում «փորձ» բառից հետո լրացնել «կամ չի պահպանվել սույն հոդվածի 2.1-2.2-րդ մասերով սահմանված նախապատվության իրավունքի իրականացման կարգը,»:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«**Հոդված 52. Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները**

1. Լիցենզիայից կամավոր հրաժարվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ Հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան կամ լիցենզավորված գործունեության իրականացումը

պատվիրակել ժամանակավոր կառավարչին: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ լիցենզիայից զրկված անձի լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին՝ բացառությամբ սույն օրենքի 52.1-րդ հոդվածով սահմանված դեպքի:

2. Հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նոր լիցենզիա տալու գործընթացն արագացնելու համար:

3. Եթե անձը հրաժարվում է իր գործունեությունը շարունակելուց կամ նրա լիցենզիայի գործողությունը դադարեցվել է, ապա Կառավարությունը այդ անձի բաժնետերերին (մասնակիցներին) առաջարկում է իր հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը: Սույն մասով սահմանված օտարումը եռամսյա ժամկետում չիրականացվելու դեպքում, որպես բացառիկ միջոց, բաժնետոմսերը (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող գույքային համալիրը կարող է օտարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածին համապատասխան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը սահմանվում է մինչև սույն հոդվածով սահմանված կարգով նոր լիցենզիա տալը կամ գույքի օտարումը:»:

Հոդված 3. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 52.1-րդ հոդվածով.

«**Հոդված 52.1. Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցների կիրառումը**

1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ Հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

2. Սույն հոդվածով սահմանված կարգով Հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառել հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցառումները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման մարմինների նիստեր (ժողովներ)՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված օրակարգով.

3) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և դիմել պետական ռեգիստր կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումն ապահովելու նպատակով.

4) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր—մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի կողմից լիցենզավորված անձի գործադիր

կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմինները իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ:

4. Ժամանակավոր կառավարիչ կարող է նշանակվել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն և էներգետիկայի բնագավառում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման կամ համակարգման ոլորտներում առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ կամ այն անձը, որն առնվազն երեք տարի գործունեություն է ծավալել նշված ոլորտներում:

5. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու դեպքում Հանձնաժողովի նախագահը վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին որոշմամբ պետք է սահմանի նաև ժամանակահատվածը, որի ընթացքում գործելու է ժամանակավոր կառավարիչը, որը կարող է սահմանվել ոչ ավել քան մինչև վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելը:

6. Սույն հոդվածով նախատեսված վարչական վարույթի արդյունքում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը շարունակվում է մինչև սույն օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործընթացների ավարտը, եթե լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշմամբ Հանձնաժողովը չի նշանակում այլ կառավարիչ՝ սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը պետք է հրապարակվի Հանձնաժողովի պաշտոնական կայքում և տեղադրվի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ ժամանակավոր կառավարչի վերաբերյալ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական

հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկություններն իր դիմումի հիման վրա պետք է գրառվեն իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում:

8. Ժամանակավոր կառավարչի գործունեության դիմաց վարձատրությունը իրականացվում է լիցենզավորված անձի հաշվին՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված չափով:

9. Ժամանակավոր կառավարչի գործունեության արդյունքում լիցենզավորված անձին պատճառված վնասները ենթակա են հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:»:

10. Կանխարգելիչ միջոցառումների կիրառման և սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածում դատարանում չի կարող քննության առարկա դառնալ լիցենզավորված անձի սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմում (սնանկ ճանաչելու հարց) և նման դիմումները (դրանց վարույթ ընդունելը) ենթակա են մերժման:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը թույլ տրված-խախտումների նկատմամբ:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետությունում էներգետիկայի բնագավառում գործունեության կարգավորումն իրականացվում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված կարգով: Այս համատեքստում լիցենզավորված անձի նկատմամբ վարույթ հարուցվելու կամ նրա լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքերում փաստացի չեն նախատեսվում երաշխիքները, որոնք կապահովեն նման դեպքերում կրիտիկական այս կարևոր ենթակառուցվածքների բնականոն և անխափան գործունեության շարունակականությունը, ինչը միտված է նաև սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

1.1. Առկա խնդիրներն ու վտանգները.

Էներգետիկ համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը ազգային անվտանգության և հասարակական բարեկեցության կարևոր բաղադրիչներն են:

Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը ներկայումս չի ապահովում բավարար մեխանիզմներ՝ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու համար, երբ էներգետիկ ոլորտի կազմակերպության գործողությունները սպառնում են համակարգի կայունությանը կամ սպառողների լայն շերտերի իրավունքներին: Պետական մարմինները փաստացի կարող են միջամտել միայն խախտումների արձանագրումից հետո (պոստֆակտում), այսինքն՝ երբ վնասն արդեն իսկ հասցվել է: Այսինքն, գործող իրավակարգավորումները թույլ չեն տալիս վտանգի կանխարգելման նպատակով անհապաղ միջամտել, ինչի հետևանքով կարող են առաջանալ հանրային շահերի լայնածավալ խախտումներ, մինչ հանրային իշխանության մարմինները ժամանակավրեպ կկարողանան արձագանքել: Նման օրենսդրական բացը լի է լուրջ վտանգներով. էներգետիկայի որևէ ենթահամակարգում (էլեկտրահաղորդում, գազամատակարարում, ջերմաէներգիա և այլն) առաջացած թերացումները կամ չարաշահումները կարող են շղթայական ազդեցությամբ վնասել ամբողջ համակարգի կայունությանը: Կանխարգելիչ միջամտության իրավական հնարավորության բացի պայմաններում, կարգավորող մարմինն ունակ չէ արագ արձագանքել և խաչընդոտել նման բացասական զարգացումները մինչ անդառնալի վնասի առաջանալը:

1.2. Կանխարգելիչ միջոցառումների էությունն ու նշանակությունը

Կանխարգելիչ միջոցառումների կիրառումը ենթադրում է, որ հանրային իշխանության մարմինները պետք է ունենան լիազորություն ժամանակին միջամտելու կարգավորվող գործունեությանը, երբ դեռ վտանգը միայն հավանական է կամ սկիզբ առնող, որպեսզի պաշտպանեն հասարակական շահերը՝ առանց սպասելու հետևանքների առաջացմանը: Նշվածը համահունչ է «կանխել, քան բուժել» տրամաբանությանը. հանրային հատուկ կարևորության ոլորտներում ավելի արդյունավետ է կանխարգելել համակարգի կոլապսը, քան հետագայում վերացնել դրա հետևանքները: Էներգետիկ անվտանգության տեսանկյունից սա նշանակում է

երաշխավորել, որ էլեկտրաէներգիայի, գազի և այլ էներգատարների մատակարարումը չընդհատվի և սպառողները պաշտպանված լինեն նույնիսկ այն դեպքում, երբ լիցենզավորված կազմակերպություններից որևէ մեկը լրջորեն խախտում է իր պարտականությունները:

Ուստի պետությունը պետք է ունենա արագ արձագանքման կառուցակարգեր, որպեսզի վտանգի բարձր հավանականության դեպքում գործադրվեն անհրաժեշտ գործընթացներ՝ կանխարգելիչ միջոցներ կիրառելու համար:

Կանխարգելիչ միջոցառումները ուղղված են շտկելու իրավիճակը, վերացնելու հավանական խախտումները կամ դրանց առաջացման ռիսկերը և ապահովելու անխափան ծառայությունների մատուցումը սպառողներին:

1.3. Միջազգային պրակտիկան

Կանխարգելիչ միջոցառումների իրավական գործիքակազմի կիրառումը տարածված պրակտիկա է տարբեր երկրներում՝ հանրային ծառայությունների անընդհատությունը երաշխավորելու և ռազմավարական նշանակության կազմակերպությունների ձախողումը կառավարելի դարձնելու համար:

Օրինակ, Մեծ Բրիտանիայում օրենսդրությամբ գործում է հատուկ կառավարչի (Special Administration) ինստիտուտը, որը կիրառվում է կենսական ծառայություններ մատուցող ձեռնարկությունների նկատմամբ: Հատուկ կառավարչի նպատակն է շարունակել ընկերության աշխատանքը և ծառայությունների մատուցումը մինչև ճգնաժամի հաղթահարումը կամ կառավարումը նոր սեփականատիրոջը փոխանցելը: Մասնավորապես, երբ խոշոր էներգամատակարար ընկերությունը ֆինանսապես ձախողվում է, կարգավորող մարմինը կամ կառավարության լիազոր մարմինը կարող են դիմել դատարան՝ հատուկ կառավարչի նշանակում պահանջելու: Հատուկ կառավարչին դատական կարգով վերապահվում է ընկերությունը ղեկավարելու պարտականություն՝

հանրությանը շարունակական էլեկտրականության և գազի մատակարարում ապահովելու հատուկ առաքելությամբ[1]:

Կառուցակարգի գործնական կիրառումից հետո անգամ բրիտանական խորհրդարանական վերահսկողության հաշվետվությունում արձանագրվել է, որ պետական միջամտությունը տվյալ դեպքում «անհրաժեշտ էր, որպեսզի տնային տնտեսություններն ու բիզնեսները պաշտպանվեն էներգետիկ մատակարարի ձախողման հետեւանքներից»[2]:

Այս փորձը վկայում է, որ նույնիսկ զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում հանրային իշխանությունն ունի արտակարգ միջամտության լծակներ՝ էներգամատակարարման ոլորտում հանրային շահը վեր դասելու համար մասնավոր շահերից:

Նման կանխարգելիչ մոտեցումներ գոյություն ունեն նաև այլ երկրներում: Օրինակ՝ ԱՄՆ որոշ նահանգներում կարգավորող մարմիններն իրավունք ունեն միջամտել անհրաժեշտության դեպքում: Տեխաս նահանգի հանրային ծառայությունների հանձնաժողովը օժտված է նման արտակարգ լիազորություններով՝ երբ լիցենզավորված կազմակերպությունը թերի պահպանում ենթակառուցվածքները, ինչը բերում էր երկարատև անջատումների և այլ վտանգների[3]:

Հատկանշական է, որ ֆինանսական համակարգում նման կանխարգելիչ միջոցառումները վաղուց ընդունված պրակտիկա են: Մի շարք երկրներում կենտրոնական բանկերն ու ֆինանսական վերահսկողական մարմինները ունեն

---

[1] Տե՛ս https://www.restructuring-globalview.com/2021/11/shining-a-light-bulb-on-energy-supply-company-failure-solrs-and-special-administration/ հղումով

[2] Տե՛ս https://www.iod.com/resources/uk-economy/policy-explainer-special-administration-regimes/#:~:text=It%20said%3A%20%E2%80%9CThe%20SAR%20process,left%20to%20foot%20the%20bill հղումով

[3] Տե՛ս https://www.wateronline.com/doc/public-utility-commission-of-texas-windermere-oaks-water-supply-corporation-0001#:~:text=Windermere%20Oaks%20provides%20retail%20water,Commission%20requests%20by%20Windermere%20Oaks հղումով

իրավասություն բանկերում կամ այլ կազմակերպություններում կիրառելու նման միջոցառումներ՝ ավանդատուների և ֆինանսական կայունության պաշտպանման համար: Օրինակ, Եվրոպական տարածաշրջանում 2008թ. ֆինանսական ճգնաժամի ընթացքում մի շարք բանկեր անցան պետական ժամանակավոր վերահսկողության տակ՝ կանխելու համար ավելի մեծ տնտեսական վնասը: Այսպիսի միջամտությունների նպատակահարմարությունը հետագայում հաստատվել է նաև դատական պրակտիկայում: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) ճանաչել է, որ արտակարգ իրավիճակներում (ինչպիսիք էին օրինակ Մեծ Բրիտանիայի Northern Rock բանկի ազգայնացման դեպքը) պետության ձեռնարկած խիստ միջոցառումները կարող են լիովին օրինաչափ լինել՝ հանրային ավելի մեծ տնտեսական կայունությունը պահպանելու շահից ելնելով[4]:

Այսպիսով՝ օրենսդրական փոփոխություններն անհրաժեշտ են, որպեսզի Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտում հանրային իշխանության մարմինները ստանան արդյունավետ կանխարգելիչ լծակներ՝ էական հանրային շահերը պաշտպանելու համար:

Առանց նմանօրինակ փոփոխությունների հանրային իշխանության մարմինները գործում են միայն որպես «հրդեհմարիչ»՝ արձագանքելով արդեն ծագած ճգնաժամերին և վնասներին: Այնինչ էներգետիկայի պես ռազմավարական կարևորության ոլորտում նման մոտեցումը անհամաչափ ռիսկեր է պարունակում ինչպես երկրի էներգետիկ անվտանգության, այնպես էլ հազարավոր սպառողների օրինական շահերի համար:

Միջազգային փորձը ևս վկայում է, որ նման ճկուն և կանխարգելիչ մոտեցումները հաջողությամբ կիրառվում են՝ այլ իրավական համակարգերում:

---

[4] Տե՛ս https://www.theguardian.com/business/2012/aug/01/northern-rock-investors-compensation#:~:text=The%20judgment%20concludes%20that%20,of%20the%20United%20Kingdom%20economy հղումով, ինչպես նաև GRAINGER AND OTHERS v. THE UNITED KINGDOM, App. No(s). 34940/10 գործը

Ուստի, անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են ապահովելու, որ պետությունը, ունենա կանխարգելիչ միջամտության իրավական և համաչափ գործիք:

2. Կարգավորման ենթակա խնդիրը.

Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է սահմանել ոլորտի լիցենզավորված անձանց գործունեության առանձնահատուկ ռիսկայնության դեպքում Կառավարության լիազոր մարմնի կողմից հաղորդում տալը և դրա հետևանքները, սահմանել ոլորտի լիցենզավորված անձանց նկատմամբ վարույթ հարուցելիս նրանց նկատմամբ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը, սահմանել կանխարգելիչ առանձնահատկությունները: միջոցառումների կիրառման կարգն ու առանձնահատկությունները:

3. Նպատակը և ակնկալվող արդյունքը.

Նախագծերի նպատակն է ապահովել էներգետիկայի բնագավառում սպառողների իրավունքների և օրինական շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև ոլորտի գործունեություն կրիտիկական կարևորությունը:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր.

Նախագծերի ընդունումը չի բխում ռազմավարական փաստաթղթերից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 27-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-րդ և ~~2.2-րդ~~ -2.3-րդ մասերով.

«2.1. Սույն հոդվածի 1-2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապատվության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Կառավարությունը կարող է օգտվել իր նախապատվության իրավունքից նշված ծանուցումը ստանալուց հետո եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապատվության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

2.2. Սույն հոդվածի 2.1-րդ մասում նշված նախապատվության իրավունքի իրականացման դեպքում գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման արժեքը չի կարող գերազանցել դրանց շուկայական արժեքը, որը որոշվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով տրված գնահատման հաշվետվությամբ: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում դրանցով սահմանված արժեքների միջինը, եթե տարբեր գնահատման

հաշվետվություններով սահմանված արժեքների տարբերությունը չի գերազանցում 10 տոկոսը: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների արժեքների տարբերությունը 10 տոկոսից ավելին լինելու դեպքում հիմք է ընդունվում 10 տոկոսի չափով տարբերությունը, և գնահատման արժեքը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով:».

2.3. Օրենսդրությամբ կամ լիցենզավորված անձի կանոնադրությամբ կամ այլ իրավական ակտերով նախատեսված՝ անձի մասնակցի կամ բաժնետիրոջ կողմից բաժնեմասի կամ բաժնետոմսի գնման (ձեռքբերման) նախապատվության իրավունք նախատեսող կարգավորումները արգելք չեն հանդիսանում սույն օրենքով սահմանված՝ Կառավարության ձեռքբերման նախապատվության իրավունքի առաջնահերթ իրացման համար:».

2) 3-րդ մասում «փորձ» բառից հետո լրացնել «կամ չի պահպանվել սույն հոդվածի 2.1-2.2-րդ մասերով սահմանված նախապատվության իրավունքի իրականացման կարգը,»:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ.

«**Հոդված 52. Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները**

1. Լիցենզիայից կամավոր հրաժարվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք ունի համապատասխան որոշմամբ պարտադրել լիցենզիայից կամավոր հրաժարված անձին ժամանակավորապես շարունակել իր գործունեությունը՝ հանձնաժողովի սահմանած պայմաններին և դրույթներին համապատասխան կամ լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում սպառողների անխափան մատակարարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը, մինչև գործունեության նոր լիցենզիա տալը, իրավունք

ունի համապատասխան որոշմամբ լիցենզիայից զրկված անձի լիցենզավորված գործունեության իրականացումը պատվիրակել ժամանակավոր կառավարչին՝ բացառությամբ սույն օրենքի 52.1-րդ հոդվածով սահմանված դեպքի:

2. Հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները նոր լիցենզիա տալու գործընթացն արագացնելու համար:

3. Եթե անձը հրաժարվում է իր գործունեությունը շարունակելուց կամ նրա լիցենզիայի գործողությունը դադարեցվել է, ապա Կառավարությունը այդ անձի բաժնետերերին(մասնակիցներին) առաջարկում է իր հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը(բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը: Սույն մասով սահմանված օտարումը եռամսյա ժամկետում չիրականացվելու դեպքում, որպես բացառիկ միջոց, բաժնետոմսերը, (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող գույքային համալիրը կարող է օտարվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածին համապատասխան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը սահմանվում է մինչև սույն հոդվածով սահմանված կարգով նոր լիցենզիա տալը կամ գույքի օտարումը:»:

Հոդված 3. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 52.1-րդ հոդվածով.

«**Հոդված 52.1. Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցների կիրառումը**

1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ ևկամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու դեպքում մասին որոշմամբ

Հանձնաժողովի նախագահը կարող է ~~կայացնել վարույթ հարուցելու~~ կիրառել և կանխարգելիչ միջոցառումներ ~~կիրառելու մասին որոշում~~: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

2. Սույն հոդվածով սահմանված կարգով Հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառել հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների ~~վերացման~~ կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցառումները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման ~~բարձրագույն մարմնի ժողով՝~~ մարմինների նիստեր (ժողովներ):Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված օրակարգով.

3) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և ~~գրանցել~~ դիմել պետական ռեգիստր կանոնադրության ~~փոփոխությունները.~~ փոփոխությունների պետական գրանցումն ապահովելու նպատակով.

4) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի կողմից լիցենզավորված անձի գործադիր

կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմինները իրենց իրավասությունները(լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ:

4. Ժամանակավոր կառավարիչ կարող է նշանակվել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն և էներգետիկայի բնագավառում կամ ~~կառավարման~~ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման կամ համակարգման ոլորտներում առնվազն ~~5~~ երեք տարվա մասնագիտական փորձ ~~ունեցող~~ կամ ~~գործունեություն իրականացնող անձը:~~ այն անձը, որն առնվազն երեք տարի գործունեություն է ծավալել նշված ոլորտներում:

5. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու դեպքում Հանձնաժողովի նախագահը վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառում կիրառելու մասին որոշմամբ պետք է սահմանի նաև ժամանակահատվածը, որի ընթացքում գործելու է ժամանակավոր կառավարիչը, որը կարող է սահմանվել ոչ ավել քան մինչև վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելը:

6. Սույն հոդվածով նախատեսված վարչական վարույթի արդյունքում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածը շարունակվում է մինչև սույն օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործընթացների ավարտը, եթե լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշմամբ Հանձնաժողովը չի նշանակում այլ կառավարիչ՝ սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշումը պետք է հրապարակվի Հանձնաժողովի պաշտոնական կայքում և տեղադրվի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, իսկ ժամանակավոր կառավարչի վերաբերյալ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված

ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկություններն իր դիմումի հիման վրա պետք է գրառվեն իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում:

8. Ժամանակավոր կառավարչի գործունեության դիմաց վարձատրությունը իրականացվում է լիցենզավորված անձի հաշվին՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված չափով:

9. Ժամանակավոր կառավարչի գործունեության արդյունքում լիցենզավորված անձին պատճառված վնասները ենթակա են հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:»÷

10. Կանխարգելիչ միջոցառումների կիրառման և սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածում դատարանում չի կարող քննության առարկա դառնալ լիցենզավորված անձի սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմում (սնանկ ճանաչելու հարց) և նման դիմումները (դրանց վարույթ ընդունելը) ենթակա են մերժման:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների նկատմամբ:

3. Սույն օրենքից ~~2-րդ հոդվածից~~ բխող ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ««ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Խ-1111-25.06.2025-ՏՀ-011/1 և Խ-1111[1]-25.06.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի և ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծեր					
1.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծերի հիմնավորումներ**	Անդրադառնալով նախագծերի հիմնավորմանը՝ հարկ ենք համարում նշել, որ իրավական ակտի հիմնավորման մեջ պետք է ներառել իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը և խնդիրները, տվյալ բնագավառում իրականացվող	**Ընդունվել է:** Նախագծերի հիմնավորումները լրամշակվել են:	**Ընդունվել է:**

			քաղաքականությունը, կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը: Այս համատեքստում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ–1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «***Միևնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարևորում է*** *օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը,* ***օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:***»: Ուստի, գտնում ենք, որ նախագծերն ունեն լրացուցիչ հիմնավորման կարիք՝ առավել մանրամասն բացահայտելով ոլորտի ընթացիկ		

			իրավիճակը և տվյալ ոլորտում ներկայում առկա խնդիրները:		
««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ					
1.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում պարզ չէ, թե Հանձնաժողովի նախագահի որոշումը արդյոք ենթակա է անհապաղ կատարման, թե ոչ, ինչպես նաև արդյոք դրա բողոքարկումը կասեցնելու է որոշման գործողությունը կամ կատարումը՝ նկատի ունենալով, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով կարգավորված է միայն Հանձնաժողովի որոշումների կատարման հետ կապված հարաբերությունները: Ուստի, գտնում ենք, որ նախագծերն ունեն լրացուցիչ հիմնավորման կարիք՝ առավել մանրամասն բացահայտելով ոլորտի ընթացիկ իրավիճակը և տվյալ ոլորտում ներկայում առկա խնդիրները:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնց արդյունքում հստակեցվել է, որ որոշումը ենթակա է անհապաղ կատարման:	**Ընդունվել է:**
««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ					

1.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-րդ և 2.2-րդ մասերով. «2.1. Սույն հոդվածի 1-2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապատվության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության մասին: Կառավարությունը կարող է օգտվել իր նախապատվության իրավունքից նշված ծանուցումը ստանալուց հետո եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապատվության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ: 2.2. Սույն հոդվածի 2.1-րդ մասում նշված նախապատվության իրավունքի իրականացման դեպքում գործարքի	**Ընդունվել է:** Նշված հոդվածում հստակեցվել է, որ դրանով բացառվում է համապատասխան իրավաբանական անձանց դեպքում նախատեսված բաժնեմասնակցության ձեռքբերման նախապատվության իրավունքի վերաբերյալ կարգավորումների կիրառումը:	**Ընդունվել է:**

			առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման արժեքը չի կարող գերազանցել դրանց շուկայական արժեքը, որը որոշվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով տրված գնահատման հաշվետվությամբ: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում դրանցով սահմանված արժեքների միջինը, եթե տարբեր գնահատման հաշվետվություններով սահմանված արժեքների տարբերությունը չի գերազանցում 10 տոկոսը: Մեկից ավելի գնահատման հաշվետվությունների արժեքների տարբերությունը 10 տոկոսից ավելին լինելու դեպքում հիմք է ընդունվում 10 տոկոսի չափով տարբերությունը, և գնահատման արժեքը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով:». Այս առումով հարկ է նկատի ունենալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 101-րդ և 109-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը		

			(դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից (բացառությամբ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքի), եթե այդ իրավունքի իրականացման այլ կարգ նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ կամ նրա մասնակիցների համաձայնությամբ: Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերն այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն: Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 101-րդ և 109-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները՝ ըստ որոնց սահմանափակ պատասխանատվությամբ և փակ բաժնետիրական ընկերություններում ընկերության մասնակիցները կամ բաժնետերերը՝ իրենց բաժնեմասերին կամ բաժնետոմսերին համամասնորեն, ունեն նախապատվության իրավունք համապատասխան բաժնեմասերի		

			կամ բաժնետոմսերի ձեռքբերման հարցում (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված որոշ դեպքերի), գտնում ենք, որ «Էներգետիկայի մասին» օրենքի նախագծով Կառավարությանը տրվող նախապատվության իրավունքի մասով բացառություն պետք է նախատեսել:		
2.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է «Էներգետիկայի մասին» օրենքում լրացնել նոր 52.1-րդ հոդված, որի 1-3-րդ մասերում նախատեսվում է հետևյալը. «1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու դեպքում Հանձնաժողովի նախագահը կարող է կայացնել վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի է առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը: 2. Սույն հոդվածով սահմանված կարգով Հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառել հետևյալ	**Ընդունվել է:** Նշված մասը խմբագրվել է՝ բացառելով բարձրաձայնված անորոշությունը:	**Ընդունվել է:**

			կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին. 1) սահմանել առերևույթ խախտումների վերացման կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցառումները. 2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման բարձրագույն մարմնի ժողով՝ Հանձնաժողովի նախագահի կողմից սահմանված օրակարգով. 3) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և գրանցել կանոնադրության փոփոխությունները. 4) պահանջել Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն. 5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ: 3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր		

			կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի կողմից լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմինները իրենց իրավասությունները իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ»: Նախ հարկ ենք համարում նշել, որ «Էներգետիկայի մասին» օրենքում նախատեսվող 52.1-րդ նոր հոդվածի 1-ին մասում օգտագործվող ձևակերպումը՝ ըստ որի «Հանձնաժողովի նախագահը կարող է կայացնել վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում», ենթակա է վերանայման, քանի որ այն առնվազն լեզվաբառային և իրավական տեսանկյունից ձևակերպված է անորոշ կերպով: Քանի որ վարույթը հարուցվում է որոշմամբ, ապա անհասկանալի է, թե ինչպես կարող է նույն որոշմամբ կրկին		

			«վերահաստատվել» վարույթի հարուցումը: Այս տրամաբանությամբ ձևակերպումն անհրաժեշտ է հստակեցնել կամ կառուցել փուլային ձևով՝ նախ արձանագրելով վարույթի հարուցման փաստը, ապա՝ դրա հիման վրա կանխարգելիչ միջոցառումների կիրառման հնարավորությունը: Նույն դիտարկումը վերաբերում է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին:		
3.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	Միաժամանակ նույն նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 52.1-ին հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե արդյոք իրավաբանական անձը ևս կարող է լինել ժամանակավոր կառավարիչ, եթե այո, ապա անհրաժեշտ է վերանայել բարձրագույն կրթության պահանջի վերաբերյալ կարգավորումը:	**Ընդունվել է:** Նշված մասը խմբագրվել է այն տրամաբանությամբ, որ պարզ լինի, որ ժամանակավոր կառավարիչ կարող է լինել նաև իրավաբանական անձը:	**Ընդունվել է:**
4.	***ՀՀ Կառավարություն***	**Լրացնել նոր կարգավորում**	Նույն նախագծով կարգավորված չէ նաև այն հարցը, թե ինչ ընթացակարգ է գործելու կանխարգելիչ միջոցառումների կիրառման ժամանակ լիցենզավորված անձի դեմ	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 52.1-ր հոդվածում լրացվել է նոր 10-րդ մաս, որի համաձայն՝	**Ընդունվել է:**

			սնանկության դիմում ներկայացնելու դեպքում:	Կանխարգելիչ միջոցառումների կիրառման և սույն օրենքի 52-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածում դատարանում չի կարող քննության առարկա դառնալ լիցենզավորված անձի սնանկության կամ սնանկության վտանգի վերաբերյալ դիմում (սնանկ ճանաչելու հարց) և նման դիմումները (դրանց վարույթ ընդունելը) ենթակա են մերժման: Համապատասխանաբար, լրացում է կատարվել նաև «Սնանկության մասին» օրենքում:	
5.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի «օրենքի 2-րդ հոդվածից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքից» բառով:	**Ընդունվել է:** Անցումային դրույթը փոփոխվել է՝ ըստ առաջարկի:	**Ընդունվել է:**

6.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի մի շարք կարգավորումներ**	Հարկ է նաև նշել, որ նախագծի որոշ կարգավորումներում առկա են տեխնիկական անհամապատասխանություններ կամ բացեր, որոնք նույնպես անհրաժեշտ է շտկել:	**Ընդունվել է:** Նախագիծը սրբագրվել է:	**Ընդունվել է:**
7.	***ՀՀ Կառավարություն***	**Լրացնել նոր նախագիծ**	Միաժամանակ հայտնում ենք, որ նշված նախագծերում առկա կարգավորումների նախատեսմանը զուգահեռ, անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելով իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի փոփոխման (ժամանակավոր կառավարչի նշանակման) դեպքում Իրավաբանական անձանց	**Ընդունվել է:** Նախագծում լրացվել է ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվում են ժամանակավոր կառավարչի գրանցման և ռեգիստրի հետ փոխհարաբերակցության առանձնահատկությունները:	**Ընդունվել է:**

			պետական ռեգիստրում համապատասխան գրառում կատարելու վերաբերյալ:		
8.	***ԱԺ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան***	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված 52-րդ հոդվածի 3-րդ մասում «բաժնետերերին» բառից հետո լրացնել «(մասնակիցներին)» բառը, «բաժնետոմսերը» բառից հետո լրացնել «բաժնեմասերը» բառը, իսկ «բացառիկ միջոց,» բառերից հետո լրացնել «բաժնետոմսերը (բաժնեմասերը),» բառերը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
9.	***ԱԺ պատգամավոր Վլադիմիր Վարդանյան***	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 52.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «խախտումների» բառից հետո «վերացման» բառը անհրաժեշտ է հանել, քանի որ նույն բառը կրկնվում է նաև «հետևանքների» բառից հետո:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
10.	***«Հայաստան» խմբակցություն***	**««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ և կից**	««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը և կից օրենսդրական փաթեթը շրջանառությունից հանել:	**Չի ընդունվել:**	**Չի ընդունվել:**

		օրենսդրական փաթեթ			